

րուն համաձայն Ս. Ստեփանոսը կը յիշուի իբր կցորդ եկեղեցի, վասնզի այդ թուականին տակաւին չէր անջատուած Վերնատան եկեղեցիէն: Բայց կը թուի թէ 808 ին այլեւս Ս. Ստեփանոս անջատուած էր Սիոնի Մայր եկեղեցիէն, և մասանց փոխադրութեամբ վերաշինուած՝ Յովսափատի վանքերու շարքին: Commemoratorium de Casis Dei խորագրով յիշատակարանին մէջ կը յիշատակուի Ս. Ստեփանոսի վանքը: 850 ին ալ Բեռնարդոս վանականը կը տեղեկացնէ թէ Սիոնի մէջ կար Ս. Ստեփանոս անունով եկեղեցի մը, որ կը գտնուէր Վերնատան եկեղեցիին արևելեան կողմը, և կը գրէ. «Ս. Ստեփանոս Սիոնի Մայր եկեղեցիին ձախ կողմը կը գտնուի, այն լերան վրայ որուն ստորոտն է Ակեղդամայն - Գեօղ արեան, ուր կայ օտարականաց գերեզմանը»:

Սիոնի Ս. Ստեփանոսի եկեղեցին հին դարերէ սկսեալ հայկական սեպհականութիւն մը եղած է. եւ անոր ընդարձակ աւերակը կը գտնուի մեր Ս. Հրեշտակապետի վանքին դիմացը, պարիսպէն ներս: 1334 թուականին հոն ընդօրինակուած զրչագիրներ կը գրտնուին Ս. Յակոբի վանուց ձեռագրաց մատենադարանին մէջ: Մինչև 1370 գոյութիւն ունեցած է եկեղեցին. 1370-1447 թուականը այլևս չի յիշատակուիր. նոյն թուականներուն քանդուած կը թուին վանքն ու եկեղեցին մեզի անձանօթ պատճառներով: 1483 ին Նիկողայոս եպս. իր ուխտատեղեաց շարքին մէջ կը յիշատակէ «Ս. Ստեփանոսի գերեզմանը ի Սիոն» ինչպէս նաեւ՝ պարիսպէն դուրս գտնուած ուխտատեղին, «Եւ յերուսաղիմայ եզերն՝ Գամաղիէլի և Ս. Ստեփանոսի գերեզմանն» խորագրով:

Հայոց Ս. Ստեփանոսի վանքին ու եկեղեցիին